ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

375010, ք. Երևան, Վ. Սարգսյանի փ. 5

№ 7/58241722

«20» 01 2023թ.

ՀՀ ազգային ժողովի նախագահին

ՄԻՋՆՈՐԴԱԳԻՐ

ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն տալու մասին

2022 թվականի նոյեմբերի 15-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին), 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) և 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերին)՝ նախաձեռնված թիվ 58241722 քրեական վարույթով կատարված նախաքննությամբ փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավարի 2005 թվականի հուլիսի 11-ի թիվ 34 և 35 որոշումներով անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով ՀՀ պաշտպանության նախարարությանն են տրամադրվել Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 24/1 հասցեում գտնվող 1,2 հա մակերեսով և նույն խճուղու 1/4 գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով «հատուկ նշանակության» նպատակային նշանակություն ունեցող հողամասերը, որոնցից առաջինի՝ «Երասխ 1» զորամասի կարգավիճակ ունեցող հողատարածքի վրա առկա են եղել զորամասի շտաբը՝ 252,8 քմ մակերեսով, զորանոցը՝ 366,4 քմ մակերեսով, ճաշարանը՝ 186,9 քմ մակերեսով, 630,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկը, ակումբը, կաթսայատունը, սանհանգույցը, հսկիչ անցագրային կետերը, իսկ երկրորդի՝ «Երասխ 2» զորամասի կարգավիճակ ունեցող հողատարածքի վրա՝ զորամասի շտաբը՝ 212,7 քմ մակերեսով, 782,2 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկերը, ճաշարանը, պահեստը, սանհանգույցը:

ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձինք, իրավասու լինելով օրենքով, այլ իրավական ակտերով ու նախարարության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում և կարգով, գործունեության

նպատակներին ու գույքի նշանակությանը համապատասխան տնօրինելու, տիրապետելու և օգտագործելու նախարարության գույքը, ինչպես նաև կազմակերպելու այդ գույքի օտարման գործընթացը՝ այդ հիմքով պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, իրենց և ենթակաների նյութական օգուտի, առավել շահեկան պայմաններով առանց խոչընդոտների գույք օտարելու շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով՝ իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ, այն է՝ խախտելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, համաձայն որոնց՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերը և դրանց վրա կառուցված շենքերը կամ շինությունները, պաշտոնեական դիրքն օգտագործելով առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու դիտավորությամբ վերը նշված հողամասերն ու դրանց վրա առկա շենք-շինությունները կադաստրային գներից անհամեմատ ցածր գներով 2009 թվականի հունվարի 13-ին կնքված պայմանագրերով ուղղակի վաճառքով՝ համապատասխանաբար 4.000.000 և 2.500.000 ՀՀ դրամով օտարել են ծառայողական ենթակայության տակ գտնվող նույն նախարարությունում բարձր պաշտոններ զբաղեցնող անձանց:

Ընդ որում, նշված անշարժ գույքերի իրական պատկանելիությունը և հանցավոր ծագումը թաքցնելու նպատակով դրանց ձեռք բերման առքուվաճառքի պայմանագրերը կնքվել և որպես սեփականություն գրանցվել են այլ անձանց անվամբ:

Բացի այդ, հիշյալ վարույթի նախաքննությամբ պարզվել է նաև, որ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) աշխատակազմի Վեդի տարածքային ստորաբաժանման ղեկավար-անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնը զբաղեցրած Էդիկ Ավետիսյանը, խախտելով Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, ըստ որոնց՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերը և այն շենքերը կամ շինությունները, որոնք կառուցված են այդ հողամասերում, ինչպես նաև անտեսելով 1999 թվականի մայիսի 6-ին ուժի մեջ մտած «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» օրենքի 43-րդ հոդվածով սահմանված՝ գրանցման համար ներկայացված փաստաթղթերը ՀՀ օրենսդրության պահանջներին չհամապատասխանելու դեպքում պետական գրանցման արգելքը, հիշյալ հողատարածքները և դրանց վրա կառուցված շենք-շինությունները որպես սեփականություն գրանցել է գնորդների անվամբ և տրամադրել է սեփականության իրավունքի վկայականներ, որով իսկ անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որի հետևանքով պետության օրինական շահերին անզգուշությամբ պատճառվել է ծանր հետևանքներ, այն է՝ հեղինակազրկվել է պետական կառավարման մարմինը՝ ՀՀ կադաստրի կոմիտեն,

խաթարվել անշարժ գույքի վերաբերյալ տեղեկատվության հավաստիության և ամբողջականության ստուգման գործառույթը, պետական սեփականություն հանդիսացող՝ առանձնապես խոշոր չափերի «հատուկ նշանակության» նպատակային նշանակություն ունեցող հողամասերը և դրա վրա առկա շենք-շինությունները օտարվել են ֆիզիկական անձանց, որով պետությունը՝ ի դեմս պաշտպանության նախարարության, զրկվել է զորամասերի տարածքները և դրանցում առկա գույքը ըստ նպատակային նշանակության սահմանամերձ տարածքում օգտագործելու հնարավորությունից, նաև՝ պետությանն անզգուշությամբ պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուրը 12.641.000 ՀՀ դրամի վնաս:

Կատարված նախաքննությամբ պարզվել է նաև, որ Էդիկ Ավետիսյանը հիշյալ հանցավոր արարքները կատարել է իրեն վերադաս, Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ղեկավար պաշտոնատար անձանց հանձնարարությամբ և իմացությամբ, ովքեր իրենց պաշտոնեական դիրքն օգտագործել են ծառայության շահերին հակառակ, նաև օգտագործելով իրենց պաշտոնեական դիրքը, ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց օժանդակել են կատարել առանձնապես խոշոր չափերով վատնում, որի հետևանքով պետությունը՝ ի դեմս պաշտպանության նախարարության, զրկվել է զորամասերի տարածքները և դրանցում առկա գույքը ըստ նպատակային նշանակության սահմանամերձ տարածքում տիրապետելու և տնօրինելու հնարավորությունից, նաև՝ պետությանն անզգուշությամբ պատճառվել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուրը 12.641.000 ՀՀ դրամի վնաս:

Նշված դեպքի առթիվ 2023 թվականի հունվարի 3-ին ՀՀ ԱԱԾ քննչական դեպարտամենտում 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին), և 38-179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 46-256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) նախաձեռնվել է թիվ 58200123 քրեական վարույթը, որը միացվել է նույն քննչական մարմնում քննվող թիվ 58241722 քրեական վարույթին:

2023 թվականի հունվարի 19-ին թիվ 58241722 քրեական վարույթով հսկող դատախազ, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետի տեղակալ Գորիկ Հովակիմյանն առաջարկություն է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ:

ՀՀ գլխավոր դատախազությունում թիվ 58241722 քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ կատարված քննությամբ ձեռք են բերվել բավարար փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ

հանրային քրեական հետապնդում հարուցել երկու դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) և երկու դրվագ 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին), այն է՝

Սեյրան Մուշեղի Օհանյանը 2008 թվականի ապրիլի 14-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը, պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, օգտագործելով պաշտոնեական դիրքը կատարել է առանձնապես խոշոր չափերով վատնում (երկու դրվագ), ինչպես նաև՝ անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ (երկու դրվագ):

Այսպես.

ՀՀ սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի: Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...)

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝

«1. Յուրացնելը կամ վատնելը՝ հանցավորին վստահված ուրիշի գույքի հափշտակությունը զգալի չափերով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկից հինգհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Նույն գործողությունը, որը կատարվել է՝

1) պաշտոնեական դիրքն օգտագործելով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

3) խոշոր չափերով,

(...)

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված գործողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

2) կազմակերպված խմբի կողմից,

3) (3-րդ կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա»:

Նույն օրենսգրքի 308-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը)՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը հինգ տարի

ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երկուսից վեց տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն գլխում պաշտոնատար անձինք են՝

1) մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք.

2) պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

(...)»:

2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի համաձայն՝

«1. Հանցավորին վստահված, այսինքն՝ նրա տնօրինմանը, տիրապետմանը կամ օգտագործմանը փաստացի կամ իրավաբանորեն ազատ կամքով հանձնված գույքի հափշտակությունը, եթե այդ գույքը հափշտակելու դիտավորությունը ծագել է օրինական հիմքերով այն ստանալուց հետո՝

պատժվում է տուգանքով՝ առավելագույնը քսանապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ ութսունից հարյուր հիսուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երկուսից հինգ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կամ

3) խոշոր չափերով՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից հիսնապատիկի չափով, կամ հանրային աշխատանքներով՝ հարյուր հիսունից երկու հարյուր յոթանասուն ժամ տևողությամբ, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Վստահված գույքը հափշտակելը, որը կատարվել է՝

1) հանցավոր կազմակերպության կողմից,

2) պատմական, գեղարվեստական կամ մշակութային առանձնակի արժեք ունեցող առարկա հափշտակելով կամ

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով»:

Նույն օրենսգրքի 441-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն ի վնաս պետական կամ ծառայողական շահերի օգտագործելը կամ իր ծառայողական պարտականությունը չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելը կամ այնպիսի արարք կատարելը, որը չի բխում իր լիազորություններից կամ դուրս է իր լիազորությունների շրջանակից, որն էական վնաս է պատճառել անձի կամ կազմակերպության իրավունքներին, ազատություններին կամ օրինական շահերին կամ հասարակության կամ պետության օրինական շահերին՝

պատժվում է տուգանքով՝ քսանապատիկից քառասնապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ երեքից յոթ տարի ժամկետով, կամ ազատության սահմանափակմամբ՝ մեկից երեք տարի ժամկետով, կամ կարճաժամկետ ազատազրկմամբ՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ մեկից չորս տարի ժամկետով:

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված արարքը, որը՝

1) կատարվել է բռնություն գործադրելով կամ բռնություն գործադրելու սպառնալիքով,

2) պատճառել է առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս,

3) կատարվել է զենք կամ հատուկ միջոց օգտագործելով,

4) կատարվել է մի խումբ պաշտոնատար անձանց կողմից նախնական համաձայնությամբ կամ

5) անզգուշությամբ առաջացրել է այլ ծանր հետևանք՝

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է հանցավոր կազմակերպության կողմից՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:

4. Սույն հոդվածի 1-ին մասի իմաստով՝ գույքային վնասի դեպքում էական է համարվում խոշոր չափերի գույքային վնասը»:

Վերոգրյալ իրավական կարգավորումների և դիտարկումների լույսի ներքո վերլուծելով թիվ 58241722 քրեական վարույթի նյութերը պետք է արձանագրել, որ նախաքննության արդյունքում ձեռք են բերվել փոխկապակցված, վերաբերելի, թույլատրելի, հավաստի ապացույցների ամբողջություն առ այն, որ Սեյրան Մուշեղի Օհանյանը, 2008 թվականի ապրիլի 14-ից մինչև 2016 թվականի սեպտեմբերի 9-ն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնը, 2009 թվականի ընթացքում գործող «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի հիման վրա

իրականացնելով զինված ուժերի անմիջական ղեկավարումը, իրավասու լինելով կազմակերպել և վերահսկել զինված ուժերի ու ՀՀ պաշտպանության նախարարության համակարգի մեջ մտնող այլ մարմինների և կազմակերպությունների գործունեությունը, պարտավոր լինելով հսկողություն իրականացնել ֆինանսական միջոցների ծախսման և նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի օգտագործման նկատմամբ, ինչպես նաև իրավասու լինելով տալ ՀՀ անունից հանդես գալու լիազորագրեր, այդ հիմքով պետական մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով 2 դրվագ պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, ինչպես նաև՝ օգտագործելով պաշտոնեական դիրքը ՀՀ պաշտպանության նախարարության հաշվեկշռում հաշվառված և ի պաշտոնե իրեն վստահված առանձնապես խոշոր չափերի արժողությամբ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 24/1 և 1/4 գ հասցեներում գտնվող հատուկ նշանակություն ունեցող հողամասերը և դրանց վրա առկա շինությունները շահադիտական նպատակով դարձրել է այլ անձինը՝ այդ կերպ վատման եղանակով հափշտակելով դրանք:

Այսպես.

Սեյրան Օհանյանը իր ենթակաների նյութական օգուտի՝ շահեկան պայմաններով առանց խոչընդոտների գույք օտարելու անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց հանցակցությամբ՝ իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, այն է՝ խախտելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ համաձայն որոնց արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերը և դրանց վրա կառուցված շենքերը կամ շինությունները, առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու դիտավորությամբ հանձնարարել է կադաստրային արժեքից անհամեմատ էժան գնով օտարել Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավարի 2005 թվականի հուլիսի 11-ի թիվ 34 որոշումով ՀՀ պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված, նույն համայնքի Երևանյան խճուղու 24/1 հասցեում գտնվող հատուկ նշանակություն ունեցող, «Երասխ 1» զինավարի տարածքը՝ 1,2 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա շինությունները:

Հիշյալ անշարժ գույքի օտարումն իրականացնելու համար 2008 թվականի դեկտեմբերի 15-ին Սեյրան Օհանյանը, թիվ ՊՆ /510-941 գրությամբ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման բաժնի պետ Արմեն Հակոբյանին լիազորել է հանդես գալ պաշտպանության նախարարության անունից, որի հիման վրա, չբացահայտելով իրական գնորդին, 2009 թվականի հունվարի 13-ին ՀՀ արդարադատության նախարարության «Կենտրոն» նոտարական գրասենյակում Արմեն Հակոբյանի և ՀՀ ՊՆ 58831 զորամասի հրամանատար Գրիգորի Խաչատուրովի հետ

փոխկապակցված անձ Էդգար Արշակյանի միջև կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 24/1 հասցեում գտնվող 2.664.000 ՀՀ դրամ կադաստրային արժեքով հողը և դրա վրա առկա 8.895.600 ՀՀ դրամ կադաստրային արժեքով շինությունները՝ զորամասի շտաբը՝ 252,8 քմ մակերեսով, զորանոցը՝ 366,4 քմ մակերեսով, ճաշարանը՝ 186,9 քմ մակերեսով, 630,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկը, ակումբը, կաթսայատունը, սանհանգույցը և հսկիչ անցագրային կետերը անհամեմատ էժան գնով՝ ընդհամենը 4.000.000 ՀՀ դրամով, փաստացի վաճառվել է Գրիգորի Խաչատուրովին, սակայն հիշյալ պայմանագրի հիման վրա օտարված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վեդու ստորաբաժանումում որպես սեփականություն գրանցվել է Էդգար Արշակյանի անվամբ, և այդ կերպ խեղաթյուրվել է գույքի իրական պատկանելիությունը:

Վերոգրյալից հետո Գրիգոր Խաչատուրովը, օգտվելով ստեղծված իրավիճակից, 2 անգամ՝ նախ 2009 թվականի մայիսի 13-ին, այնուհետև նաև՝ 2016 թվականի օգոստոսի 16-ին, հիշյալ անշարժ գույքի գրավադրմամբ «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերությունից ստացել է առանձնապես խոշոր չափերով գումար և այդ եղանակով օրինականացրել նշված գումարի հանցավոր ծագումը:

Այսինքն, Սեյրան Օհանյանը, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, հեղինակազրկվել է պետական, պաշտպանական գերատեսչությունը, պետությունը՝ ի դեմս պաշտպանության նախարարության, զրկվել է զորամասերի տարածքները և դրանցում առկա գույքն ըստ նպատակային նշանակության սահմանամերձ տարածքում օգտագործելու հնարավորությունից, բացի այդ՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ վատնել է՝ շահադիտական նպատակով այլ անձինը՝ Գրիգոր Խաչատուրովինն է դարձրել առանձնապես խոշոր չափերի՝ 11.559.600 ՀՀ դրամ արժողության Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 24/1 հասցեում գտնվող հողատարածքը և դրա վրա կառուցված շինությունները՝ դրանք վաճառելով ընդամենը 4.000.000 ՀՀ դրամով:

Բացի այդ՝

Սեյրան Մուշեղի Օհանյանը, դարձյալ իր ենթակաների նյութական օգուտի՝ շահեկան պայմաններով առանց խոչընդոտների գույք օտարելու անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան պաշտոնատար անձանց հանցակցությամբ՝ իր պաշտոնեական դիրքը դարձյալ օգտագործել է ծառայության շահերին հակառակ, այն է՝ կրկին խախտելով ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, առանձնապես խոշոր չափերով վատնում կատարելու դիտավորությամբ հանձնարարել է կադաստրային արժեքից անհամեմատ էժան գնով օտարել նաև Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավարի՝ 2005 թվականի հուլիսի

11-ի թիվ 35 որոշումով ՀՀ պաշտպանության նախարարությանն անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրված, նույն համայնքի Երևանյան խճուղու 1/4 գ հասցեում գտնվող հատուկ նշանակություն ունեցող «Երասխ 2» զինավարի տարածքը՝ 0,9 հա մակերեսով, և դրա վրա առկա շինությունները:

Հիշյալ անշարժ գույքի օտարումն իրականացնելու համար 2008 թվականի դեկտեմբերի 15-ին Սեյրան Օհանյանը, թիվ ՊՆ /510-942 գրությամբ ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման բաժնի պետ Արմեն Հակոբյանին լիազորել է հանդես գալ պաշտպանության նախարարության անունից, որի հիման վրա, չբացահայտելով իրական գնորդին, 2009 թվականի հունվարի 13-ին ՀՀ արդարադատության նախարարության «Կենտրոն» նոտարական գրասենյակում Արմեն Հակոբյանի և ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետ հանդիսացած Արմեն Գևորգյանի հետ փոխկապակցված անձ Նորայր Կարապետյանի միջև կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, համաձայն որի՝ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 1/4 գ հասցեում գտնվող 1.998.000 ՀՀ դրամ կադաստրային արժեքով հողը և դրա վրա առկա 5.583.400 ՀՀ դրամ կադաստրային արժեքով շինությունները՝ զորամասի շտաբը՝ 212,7 քմ մակերեսով, 782,2 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկերը, ճաշարանը, պահեստը, սանհանգույցն անհամեմատ էժան գնով՝ ընդհամենը 2.500.000 ՀՀ դրամով փաստացի վաճառվել է Արմեն Գևորգյանին, սակայն հիշյալ պայմանագրի հիման վրա օտարված անշարժ գույքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեում որպես սեփականություն գրանցվել է Նորայր Կարապետյանի անվամբ, և այդ կերպ խեղաթյուրվել է գույքի իրական պատկանելիությունը:

Այսինքն Սեյրան Օհանյանը, անձնական այլ շահագրգռվածությունից և խմբային շահերից ելնելով պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, որն անզգուշությամբ առաջացրել է ծանր հետևանքներ, այն է խախտվել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները, հեղինակազրկվել է պետական, պաշտպանական գերատեսչությունը, պետությունը՝ ի դեմս պաշտպանության նախարարության, զրկվել է զորամասերի տարածքները և դրանցում առկա գույքը ըստ նպատակային նշանակության սահմանամերձ տարածքում օգտագործելու հնարավորությունից, բացի այդ՝ պաշտոնեական դիրքի օգտագործմամբ վատնել է՝ շահադիտական նպատակով այլ անձինը՝ փաստացի Արմեն Գևորգյանինն է դարձրել առանձնապես խոշոր չափերի՝ 7.581.400 ՀՀ դրամ արժողության Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղու 1/4 գ հասցեում գտնվող հատուկ նշանակության հողատարածքը և դրա վրա կառուցված շինությունները՝ դրանք վաճառելով ընդամենը 2.500.000 ՀՀ դրամով:

Այսպիսով՝ Սեյրան Մուշեղի Օհանյանին մեղսագրվում է 2 դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին) և 2 դրվագ 308-րդ հոդվածի 2-րդ մասով (համապատասխանում է 2022 թվականի հուլիսի 1-

ին ուժի մեջ մտած ՀՀ քրեական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետին) հանցավոր արարքների կատարում:

ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի կողմից վերոնշյալ հանցավոր արարքների կատարումը հաստատվել է քրեական վարույթի նախաքննությամբ ձեռք բերված մի շարք փաստական տվյալներով:

Մասնավորապես.

1. Արարատի մարզի Արմաշ համայնքի ղեկավարի 11.07.2005 թվականի թիվ 34 և 35 որոշումներով, համաձայն որոնց՝ անհատույց, մշտական օգտագործման իրավունքով ՀՀ պաշտպանության նախարարությանն են տրամադրվել Արարատի մարզի Արմաշ համայնքի տարածքում գտնվող, ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զբաղեցված 1.2 հա և 0,9 հա մակերեսներով հողամասերը:

2. ՀՀ կադաստրի կոմիտեից առգրավված կադաստրային թիվ 12010452 գործի զննությամբ, որով պարզվել է, որ Արարատի մարզի Արմաշ համայնքում գտնվող 1,2 հա մակերեսով («Երասխ-1» զորամաս) հատուկ նշանակության հողը և զորամասի շտաբը՝ 252,8 քմ մակերեսով, զորանոցը՝ 366,4 քմ մակերեսով, ճաշարանը՝ 186,9 քմ մակերեսով, 630,6 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկը, ակումբը, կաթսայատունը, սանհանգույցը, հսկիչ անցագրային կետերը 13.01.2009 թվականին Հայաստանի Հանրապետության, ի դեմս՝ ՀՀ պաշտպանության նախարարության, որի անունից ՀՀ ՊՆ նախարար՝ Սեյրան Օհանյանի կողմից 15.12.2008 թվականին տրված թիվ ՊՆ/510-941 լիազորագրով հանդես է եկել Արմեն Հակոբյանը, և Էդգար Հարությունի Արշակյանի միջև կնքված առքուվաճառքի պայմանագրով ընդհանուրը 4.000.000 ՀՀ դրամով, որից 2.700.000 ՀՀ դրամն հողամասի արժեքն է, իսկ 1.300.000 ՀՀ դրամը՝ շենք-շինության, վաճառվել է Էդգար Արշակյանին: Նշված պայմանագիրը վավերացվել է ՀՀ արդարադատության նախարարության «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Աիդա Աբրահամյանի կողմից, որը գրանցվել է նոտարական տարածքի սեղանամատյանի 108-րդ համարի ներքո:

Այնուհետև՝ նշված հողամասի և դրա վրա առկա շենք շինությունների նկատմամբ 22.01.2009 թվականի թիվ ՊՆ 035/85 տեղեկանքի, վերոնշյալ առքուվաճառքի պայմանագրի, 14.01.2009թ. թիվ 9011400443312 անդորրագրի հիման վրա ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վեդու ստորաբաժանման ղեկավար Էդիկ Ավետիսյանի կողմից կատարվել է սեփականության իրավունքի պետական գրանցում Էդգար Հարությունի Արշակյանի անվամբ և վերջինիս տրվել է սեփականության իրավունքի թիվ 2367704 վկայականը: Դրանից հետո վերը նշված անշարժ գույքի նկատմամբ 08.05.2009 թվականին թիվ 91200020909/01 հիփոթեքի պայմանագրի հիման վրա 13.05.2009թ. կատարվել է գրավի իրավունքի և սահմանափակման պետական գրանցում, որով նշված անշարժ գույքը, որպես գրավի առարկա, 10.000.000 ՀՀ դրամ արժեքով գրավադրվել է «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ», ՓԲԸ-ի Վեդու մասնաճյուղում՝ վարկառու Գրիգորի Յուրիի Խաչատուրովին մինչև 8.000.000 ՀՀ դրամ գումարի չափով վարկ տրամադրելու համար:

Բացի այդ, նույն անշարժ գույքի նկատմամբ 15.08.2016 թվականին թիվ 1605030287/02 հիփոթեքի պայմանագրի հիման վրա 16.08.2016թ. կատարվել է գրավի իրավունքի և սահմանափակման պետական գրանցում, որով նշված անշարժ գույքը որպես գրավի առարկա գրավադրվել է «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի Վանաձորի մասնաճյուղում՝ վարկառու Գրիգորի Յուրիի Խաչատուրովին մինչև 18.424.480 ՀՀ դրամ գումարի չափով վարկ տրամադրելու համար:

3. ՀՀ կադաստրի կոմիտեից առգրավված կադաստրային թիվ 12058124 գործի զննությամբ, որով պարզվել է, որ Արարատի մարզի Արմաշ համայնքում գտնվող 0,9 հա մակերեսով («Երասխ-2», զորամաս) հատուկ նշանակության հողը և զորամասի շտաբը՝ 212,7 քմ մակերեսով, 782,2 քմ ընդհանուր մակերեսով շինությունը, ծածկերը, ճաշարանը, պահեստը, սանհանգույցը 13.01.2009 թվականին ՀՀ-ի, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության, որի անունից ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի կողմից 15.12.2008 թվականին տրված թիվ ՊՆ/510-942 լիազորագրով հանդես է եկել Արմեն Հակոբյանը, և Նորայր Կարապետյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրով ընդհանուրը 2.500.000 ՀՀ դրամով, որից 2.000.000 ՀՀ դրամն հողամասի արժեքն է, իսկ 500.000 ՀՀ դրամը՝ շենք-շինության, վաճառվել է Նորայր Կարապետյանին: Նշված պայմանագիրը վավերացվել է կրկին ՀՀ Արդարադատության նախարարության «Կենտրոն» նոտարական տարածքի նոտար Աիդա Աբրահամյանի կողմից, որը գրանցվել է նոտարական տարածքի սեղանամատյանի 107-րդ համարի ներքո: Դրանից հետո նշված գույքը ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Վեդի տարածքային ստորաբաժանման ղեկավար Էդիկ Ավետիսյանի կողմից իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 03019-4-7 մատյանի 000178 համարի տակ որպես սեփականություն 2009 թվականի փետրվարի 02-ին գրանցվել է Նորայր Կարապետյանի անվամբ և վերջինիս տրվել սեփականության իրավունքի թիվ 2357518 վկայականը:

4. ՀՀ արդարադատության նախարարության «Կենտրոն» նոտարական տարածքից առգրավված «Երասխ-1» և «Երասխ-2» զորամասերի հողատարածքների և դրանց վրա առկա շենք-շինությունների օտարման վերաբերյալ կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրերի վավերացման մասին նոտարական գործերում առկա փաստաթղթերի զննության մասին արձանագրությամբ, որով պարզվել է հետևյալը.

- «Երասխ-1» զորամասի հողատարածքը և դրա վրա կառուցված շենք-շինությունների օտարման պայմանագրի վավերացման վերաբերյալ կազմվել է թիվ 108 նոտարական գործը: Համաձայն գործում առկա լիազորագրի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՊՆ/510-941 լիազորագրով ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության զորքերի բնակավորման բաժնի պետ, մայոր Արմեն Վոլոդյայի Հակոբյանին լիազորել է որպես լիազոր ներկայացուցիչ հանդես գալ նոտարական գրասենյակում՝ Արարատի մարզի Արմաշ համայնքում գտնվող «Երասխ-1» զորամասը (սեփականության վկայական թիվ 1301569, տրված 31.05.2006թ.) 4.000.000 ՀՀ դրամով, (2.700.000 դրամը՝ հողամասի, իսկ 1.300.000 դրամը՝ շենք-շինությունների)

քաղաքացի Էդգար Արշակյանին վաճառելու, առուվաճառքի պայմանագիրը ստորագրելու և հանձնարարության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելու համար:

➢ «Երասխ-2» զորամասի հողատարածքը և դրա վրա կառուցված շենք-շինությունների օտարման պայմանագրի վավերացման վերաբերյալ կազմվել է թիվ 107 նոտարական գործը: Համաձայն գործում առկա լիազորագրի՝ 2008 թվականի դեկտեմբերի 15-ին ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը, ՊՆ/510-942 լիազորագրով Արմեն Վոլոդյայի Հակոբյանին լիազորել է որպես ներկայացուցիչ հանդես գալու նոտարական գրասենյակում՝ Արարատի մարզի Արմաշ համայնքում գտնվող «Երասխ-2» զորամասը (սեփականության վկայական թիվ 1727904, տրված 31.05.2006թ.) 2.500.000 ՀՀ դրամով, (2.000.000 դրամը՝ հողամասի, իսկ 500.000 դրամը՝ շենք-շինությունների) քաղաքացի Նորայր Կարապետյանին վաճառելու, առուվաճառքի պայմանագիրը ստորագրելու և հանձնարարության հետ կապված բոլոր անհրաժեշտ գործողությունները կատարելու համար:

5. Դեպքի վայրի զննության արձանագրություններով, համաձայն որոնց Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող 1,2 հա մակերեսով հատուկ նշանակություն ունեցող հողամասի վրա առկա շինությունները կանգուն են, իսկ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 1/4գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով հատուկ նշանակություն ունեցող հողամասի վրա առկա շինություններն ապամոնտաժվել են:

Զննություններին մասնակից Վարուժան Մուրադյանը հայտարարել է, որ 1,2 հա մակերեսով հողամասը պատկանում է Գրիգորի Խաչատուրովին, իսկ 0,9 հա մակերեսով հողատարածքը՝ ՀՀ ՊՆ-ում ինչ-որ վարչության պետի պաշտոն զբաղեցրած անձի:

6. ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն՝ արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն հողամասերը, որոնք հատուկ նշանակության հողեր են, պետական կամ համայնքային գերեզմանատներ են՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

7. Նույն օրենսգրքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ արգելվում է օտարել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող այն շենքերը կամ շինությունները, որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում: Նման շենքերը կամ շինությունները կարող են տրամադրվել օգտագործման կամ կառուցապատման իրավունքով, և դրանք կարող են օտարվել միայն համապատասխան հողամասի նպատակային նշանակությունը սահմանված կարգով փոփոխելուց հետո՝ սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերի պահպանմամբ:

8. ՀՀ Կադաստրի կոմիտեից ստացված գրությամբ և դրան կից տեղեկանքով, համաձայն որոնց՝ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող 1.2 հա մակերեսով հատուկ նշանակության հողամասի կադաստրային արժեքը 2009 թվականի հունվար ամսվա դրությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման նպատակով կազմել է 2.664.000 ՀՀ դրամ, իսկ դրա

վրա առկա շենք շինությունների կադաստրային արժեքը առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցման ամսաթվի դրությամբ գույքահարկի հաշվարկման նպատակով կազմել է 8.895.600 ՀՀ դրամ:

Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 1/4գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով հատուկ նշանակության հողամասի կադաստրային արժեքը 2009 թվականի հունվար ամսվա դրությամբ պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի օտարման նպատակով կազմել է 1.998.000 ՀՀ դրամ, իսկ դրա վրա առկա շենք շինությունների կադաստրային արժեքը առուվաճառքի պայմանագրից ծագած իրավունքների պետական գրանցման ամսաթվի դրությամբ՝ գույքահարկի հաշվարկման նպատակով կազմել է 5.583.400 ՀՀ դրամ:

9. Վկա Նորայր Կարապետյանի ցուցմունքով այն մասին, որ 2009 թվականի հունվարին իր ազգական, նշված ժամանակահատվածում ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության բնակավորման վարչության պետ Արմեն Գևորգյանը դիմել է իրեն և հայտնել, որ ցանկանում է գնել պաշտպանության նախարարության կողմից օտարվող Արարատի մարզի Արմաշ համայնքի տարածքում տեղակայված, ՀՀ ՊՆ հաշվեկշռում գտնվող զորամասի տարածքը: Միաժամանակ խնդրել է, որ այն որպես սեփականություն գրանցվի իր անունով:

Հաշվի առնելով իրենց մեջ առկա ազգակցական կապը՝ չի մերժել Արմեն Գևորգյանին և նրա խնդրանքով 2009 թվականի հունվարի 13-ին ներկայացել է նոտարական գրասենյակ, որտեղ իր և պաշտպանության նախարարության ներկայացուցիչ Արմեն Հակոբյանի միջև կնքվել է առքուվաճառքի պայմանագիր: Այնուհետև, Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 1/4գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա անշարժ գույքը գնելու վերաբերյալ առքուվաճառքի պայմանագիրը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերը, Արմեն Գևորգյանի պահանջով ներկայացրել է ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի Վեդիի ստորաբաժանում, և հիշյալ հողամասը՝ շինություններով հանդերձ, որպես սեփականություն գրանցվել է իր անվամբ, ու ստացել է սեփականության վկայական, որը, մյուս փաստաթղթերի հետ միասին փոխանցել է Արմեն Գևորգյանին, քանի որ վերջինս է հանդիսացել նշված անշարժ գույքի իրական սեփականատերը:

Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 1/4գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով հողամասը և դրա վրա առկա անշարժ գույքը գնելու, այնուհետև՝ այն որպես սեփականություն գրանցելու հետ կապված բոլոր վճարումները կատարել է Արմեն Գևորգյանի կողմից իրեն փոխանցված գումարներից: Որքանով հիշում է այդ հողատարածքի և դրա վրա առկա շենք շինությունների վաճառքի համար որպես ընդհանուր արժեք պայմանագրում նշված է եղել 2.500.000 ՀՀ դրամ, որն էլ ամբողջությամբ վճարվել է: Քանի որ նշված գործարքներով զբաղվել են Արմեն Գևորգյանը և Արմեն Հակոբյանը, այդ պատճառով չգիտի, թե՝ նշված անշարժ գույքի արժեքն ում կողմից և ինչ եղանակով է որոշվել: Ըստ իր ունեցած տեղեկությունների՝ հիշյալ հողատարածքը և անշարժ գույքը հանդիսացել են հատուկ նշանակության

անշարժ գույք, իսկ թե ինչ հանգամանքներում է նոտարը վավերացրել գույքի առքուվաճառքը, իսկ կադաստրի պետական կոմիտեն կատարել գրանցում՝ իրեն հայտնի չէ:

Իր կարծիքով Արմեն Գևորգյանը հիշյալ հողատարածքը և դրա վրա առկա շինություններն իր անվամբ է գրանցել այն պատճառով, քանի որ այդ ժամանակ նա հանդիսացել է պաշտոնատար անձ և այդ կերպ ցանկացել է զերծ մնալ ավելորդ շահարկումներից:

Հետագայում հիշյալ տարածքում գտնվող շինությունները համապատասխան թույլտվությունների հիման վրա քանդվել են:

10. Վկա Արմեն Գևորգյանի ցուցմունքով այն մասին, որ 2008 թվականի օգոստոսի 27-ից մինչև 2010 թվականի հոկտեմբերի 25-ը հանդիսացել է ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչություն պետը:

ՀՀ պաշտպանության նախարարությունում պաշտոն զբաղեցնելու ժամանակահատվածում տեղեկացել է, որ նախարարությունը ցանկանում է սեղմ ժամկետում օտարել Արարատի մարզի Արմաշ համայնքում տեղակայված «Երասխ 1» և «Երասխ 2» զինավանների տարածքները: Այդ զինավանների օտարման հրատապությունը կայացել է նրանում, որ Արարատի թիվ 58831 զորամասի ստորաբաժանումների «Արարատ 1» զինավանում համապատասխան շինարարական աշխատանքներից հետո ստորաբաժանումները կենտրոնացվել են այդ զինավանում, դրանով պայմանավորված «Երասխ 1» և «Երասխ 2» զինավանների առկայության անհրաժեշտությունը վերացել է և դրանց պահպանության համար զորամասը ստիպված է եղել ավելորդ զինուժ հատկացնել այդ տարածքների պահպանության համար:

Քանի որ մտադրություն է ունեցել ծառայությունից ազատվելուց հետո ունենալ սեփական աշխատանք, այդ իսկ պատճառով որոշել է գնել Արարատի մարզի Արմաշ համայնքում գտնվող 0,9 հա մակերեսով «Երասխ 2» զինավանի տարածքը: Սակայն այդ ժամանակ զբաղեցրել է ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչություն պետի պաշտոնը, իսկ գույքի օտարման գործընթացով զբաղվել է նշված վարչությունը, ուստի աշխատավայրում ավելորդ խոսակցություններից զերծ մնալու պատճառով որոշել է հիշյալ անշարժ գույքի ձեռք բերումն իրականացնել քրոջ ամուսու՝ Նորայր Կարապետյանի անվամբ:

Իր որոշման մասին հայտնել է Նորայր Կարապետյանին, ով համաձայնել է և իր ուղղորդմամբ դիմում է հասցեագրել ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանին՝ հայտնելով հիշյալ տարածքը գնելու ցանկության մասին: Դրանից հետո Սեյրան Օհանյանը համապատասխան հանձնարարական է տվել իրենց վարչությանը՝ գույքի օտարումն իրականացնելու վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու և իրեն ներկայացնելու վերաբերյալ: Համապատասխան գնահատող կազմակերպության աշխատակիցների կողմից «Երասխ 2» զինավանի հողատարածքը և դրա վրա առկա շինությունները գնահատվելուց հետո ՊՆ նախարարի կողմից լիազորված իր վարչության աշխատակից Արմեն Հակոբյանը զբաղվել է փաստաթղթերի կազմամբ և դրանք

պատրաստ լինելուց հետո իր խնդրանքով Նորայր Կարապետյանը ներկայացել է նոտարական գրասենյակ, որտեղ նրա և Արմեն Հակոբյանի միջև կնքվել է առքուվաճառքի պայմանագիր, որի հիման վրա էլ հիշյալ անշարժ գույքը գրանցվել է Նորայր Հակոբյանի անվամբ:

«Երասխ 2» զինավանի հողատարածքը և դրա վրա առկա շինությունները ձեռք է բերվել 2.500.000 ՀՀ դրամով և ինչպես այդ գումարը, այնպես էլ գույքի ձեռք բերման գործընթացի հետ կապված բոլոր վճարումներն իր կողմից հատկացված գումարով վճարվել են Նորայր Կարապետյանի անունից:

Ի սկզբանե հիշյալ անշարժ գույքը ձեռք է բերել ինքը և մինչև օրս էլ այն փաստացի պատկանում է իրեն:

Արմեն Գևորգյանը նաև հայտնել է, որ երբ ՀՀ պաշտպանության նախարարությունում որոշում է կայացվել վաճառել հիշյալ զինավանների տարածքները, այդ մասին հայտնել է Արարատի զորամասի հրամանատար Գրիգորի Խաչատուրովին և խնդրել «Երասխ 1» զինավանի հողատարածքի ու դրա վրա առկա շինությունների համար գնորդ գտնել: Որոշ ժամանակ հետո Գրիգորի Խաչատուրովն իրեն հայտնել, որ գնորդ է գտել և նրան կուղարկի պաշտպանության նախարարություն՝ համապատասխան դիմում ներկայացնելու համար: Թե ով է եղել այդ անձնավորությունը և ինչ կապ է ունեցել Գրիգորի Խաչատուրովի հետ՝ ինքը տեղյակ չէ:

Գնորդ հայտնվելու մասին զեկուցվել է ՊՆ նախարար Սեյրան Օհանյանին և համապատասխան ընթացակարգով վերջինիս է ուղարկվել «Երասխ 1» զինավանի հողատարածքը և դրա վրա առկա շինությունները ձեռք բերելու ցանկության վերաբերյալ հիշյալ անձնավորության դիմումը: Այն մակագրվել է իրենց վարչությանը՝ գործընթացը կազմակերպելու համար: Դրա հիման վրա էլ կազմվել են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը, և այն նույն օրը, երբ իրականացվել է իր կողմից ձեռք բերված «Երասխ 2» զինավանի տարածքի գնման գործընթացը, Արմեն Հակոբյանի և Գրիգորի Խաչատուրովի կողմից ուղարկված անձի միջև պայմանագիր է կնքվել «Երասխ 1» զինավանի հողատարածքի և դրա վրա առկա շինությունների առքուվաճառքի վերաբերյալ:

Որքան հիշում է «Երասխ 1» զինավանի տարածքը շինություններով հանդերձ վաճառվել է 4.000.000 ՀՀ դրամով:

«Երասխ 1» և «Երասխ 2» զինավանների հողատարածքներն ունեցել են հատուկ նպատակային նշանակության և հանդիսացել են պաշտպանական օգտագործման նպատակով հողատարածքներ:

Հիշյալ գույքերի օտարման ժամանակ ՀՀ ՊՆ գլխավոր շտաբի պետն է եղել Յուրի Խաչատուրովը: Իրենց վարչությունն անմիջապես ենթակա է եղել պաշտպանության նախարարին: Օտարման ենթակա նշված անշարժ գույքերի ցանկը համաձայնեցվել է գլխավոր շտաբի հետ, քանի որ գլխավոր շտաբում է որոշվել, թե որ զինավանի անհրաժեշտությունն այլևս չկա: Ինքը որպես վարչության պետ զեկուցագրեր է ներկայացրել ՊՆ նախարարին հողատարածքների օտարման արժեքների վերաբերյալ՝ զեկուցագրին կցելով գնահատման եզրակացությունը: ՊՆ նախարարն էլ իր

համաձայնությունն է տվել այդ կապակցությամբ, որից հետո էլ իրականացվել է օտարումը: Պաշտպանության նախարարության սեփականություն հանդիսացող հիշյալ հողատարածքների և դրանց վրա առկա շենք-շինությունների օտարման վերջնական արժեքն ի պաշտոնե լիազորված է եղել որոշել ՀՀ ՊՆ նախարարը:

11. Վկա Էդգար Արշակյանի ցուցմունքով այն մասին, որ 2008-2009 թվականների ընթացքում, կոնկրետ ժամանակը չի հիշում, ընկերական հավաքույթի ժամանակ իր ուսանողական ընկեր և երեխաների կնքահայր Գրիգորի Յուրիի Խաչատուրովից տեղեկանալով, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը վաճառում է Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող նախկին «Երասխ 1» զորամասի հողատարածքը և դրա վրա առկա շինությունները, որոշել է գնել այն: Իր ցանկությունն ի կատար ածելու նպատակով ՊՆ ներկայացուցչի հետ, ում ինքնությունը չի հիշում, նախ այցելել է նշված զորամասի տարածք և ուսումնասիրել է այն, որից հետո պաշտպանության նախարարության հետ պայմանավորվածություն է ձեռք բերել գույքի արժեքի վերաբերյալ, որից հետո էլ իր և ՊՆ նույն ներկայացուցչի միջև նոտարական գրասենյակներից մեկում պայմանագիր է կնքվել Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող նախկին «Երասխ 1» զորամասի հողատարածքի և դրանում առկա շինությունների առքուվաճառքի վերաբերյալ, որի հիման վրա էլ գրանցվել է իր սեփականության իրավունքը:

Հիշյալ հողատարածքի ձեռք բերման վերաբերյալ այլ հանգամանքներ չի հիշում:

Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող նախկին «Երասխ 1» զորամասի հողատարածքի և դրանում առկա շինությունների նկատմամբ սեփականության իրավունքի գրանցումից մի քանի ամիս հետո, իր համաձայնությամբ Գրիգորի Խաչատուրովը հիշյալ անշարժ գույքը գրավադրել է «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերության Արարատի մարզի մասնաճյուղերից մեկում և ստացել մոտ 10.000 ԱՄՆ դոլարի վարկ:

Հետագայում, դարձյալ իր համաձայնությամբ, Գրիգորի Խաչատուրովը, Վանաձոր քաղաքում բնակարան գնելու նպատակով, նույն անշարժ գույքն որպես վերցվող վարկի ապահովման միջոց գրավադրել է նաև «Ակբա կրեդիտ ագրիկոլ բանկ» ՓԲ ընկերության Վանաձոր քաղաքում գտնվող մասնաճյուղում:

Ներկայումս նշված անշարժ գույքն այլևս գրավի առարկա չի հանդիսանում:

Հողատարածքի և դրա վրա առկա շենք շինությունների նպատակային նշանակությունները մինչև օրս չեն փոխվել, հողատարածքի վրա առկա շինությունները չեն քանդվել, նոր շինություն չի կառուցվել:

12. Վկա Գրիգորի Խաչատուրովի ցուցմունքով այն մասին, որ 2004 թվականի օգոստոսի 7-ից մինչև 2006 թվականի աշունը զբաղեցրել է ՀՀ ՊՆ 58831 Արարատի Զոդի զորամասի շտաբի պետի, իսկ դրանից, հետո մինչև 2010 թվականի հունվար ամիսը՝ զորամասի հրամանատարի պաշտոնը:

Նշված զորամասում ծառայություն իրականացնելու ժամանակահատվածում չի հիշում ումից տեղեկացել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության ղեկավարությունը որոշել է վաճառել ՀՀ ՊՆ սեփականություն հանդիսացող Արարատի մարզի Արմաշ

համայնքի Երևանյան խճուղի 24/1 և Երևանյան խճուղի 1/4գ հասցեներում տեղակայված այլևս չգործող «Երասխ 1» և «Երասխ 2» զինավանների հողատարածքները և դրանցում առկա շինությունները:

Վերոգրյալի մասին հայտնել է իր ընկեր Էդգար Արշակյանին, ով ցանկություն է հայտնել գնել դրանցից մեկը: Դրանից հետո Էդգար Արշակյանից տեղեկացել է, որ վերջինս համապատասխան դիմում է ներկայացրել պաշտպանության նախարարություն, այցելել և տեսել է «Երասխ 1» զինավանի տարածքը և 4.000.000 ՀՀ դրամով գնել այն:

Գրիգորի Խաչատուրովը հաստատել է հիշյալ անշարժ գույքն իր կարիքների համար երկու անգամ գրավադրելու հանգամանքը, սակայն հերքել է այն փաստացի իրեն պատկանելու հանգամանքը:

13. Վկա Արմեն Հակոբյանի ցուցմունքով է այն մասին, որ 2004 թվականից մինչև 2009 թվականն աշխատել է ՀՀ պաշտպանության նախարարության կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության զորքերի բնակավորման բաժնում որպես ավագ սպա, իսկ դրանից հետո մինչև օրս հանդիսանում է նույն բաժնի պետը:

2009 թվականի ընթացքում, կոնկրետ ժամանակը չի հիշում, ՀՀ ՊՆ նախարար Սեյրան Օհանյանի կողմից տրված լիազորագրի հիման վրա, որպես պաշտպանության նախարարության ներկայացուցիչ, մասնակցել է ՀՀ ՊՆ հաշվեկշռում գտնված Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող 1,2 հա մակերեսով և նույն խճողու 1/4 գ հասցեում գտնվող 0,9 հա մակերեսով նախկին «Երասխ 1» և «Երասխ 2» զինավանների օտարման գործարքներին և ինքն է գնորդների հետ կնքել գույքերի առքուվաճառքի պայմանագրերը:

Նախքան պայմանագրերի կնքումը գնորդ ներկայացած անձանց չի ճանաչել և տեղյակ չէ նրանք իրական գնորդներ են եղել, թե՝ ոչ: Գնորդ ներկայացած քաղաքացիները գույքը ձեռք բերելու ցանկության մասին նախապես դիմում են ներկայացրել ՊՆ նախարարին, ում կողմից էլ տրված հանձնարարության հիման վրա ընթացքավորել է դիմումը: Օտարված հիշյալ հողատարածքների վերջնական արժեքը որոշել է ՊՆ նախարար Սեյրան Օհանյանը, իսկ թե ինչ կարգով՝ տեղյակ չէ:

14. Վկա Վարուժան Մուրադյանի ցուցմունքով այն մասին, որ 1985 թվականից աշխատում է Արարատի մարզի Արմաշ գյուղի տարածքում Երևանյան խճուղու եզրին տեղակայված, Արարատի մարզի ջուր օգտագործող ընկերության «Արազափ» պոմպակայանում որպես մեխանիկ: Պոմպակայանի շենքը գտնվում է ՀՀ ՊՆ նախկին «Երասխ 1» զորամասի տարածքին կից: Բացի այդ, նշված նախկին զորամասի հողատարածքում, որը պատկանում է ՀՀ ՊՆ նախկին բարձրաստիճան զինվորական, շտաբի պետ հանդիսացած Յուրի Խաչատուրովի որդի Գրիգորի Խաչատուրովին, զբաղվում է անասնապահությամբ: Տարիներ առաջ, կոնկրետ տարեթիվը չի հիշում, տեղեկանալով, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը առկա շինություններով հանդերձ վաճառել է «Երասխ 1» զորամասի հողատարածքը և որ այն գնել է Գրիգորի Խաչատուրովը, դիմել է իր ծանոթ, Վեդի քաղաքի բնակիչ, ներկայիս հանգուցյալ Տիգրան Դարաբյանին, և խնդրել, որ զրուցի Գրիգոր Խաչատուրովի հետ, որպեսզի

վերջինս թույլատրի բնակվել այդ տարածքում, զբաղվել անասնապահությամբ և անհատույց հսկել տարածքը:

Տիգրան Դարաբյանն իրեն ծանոթացրել է Գրիգորի Խաչատուրովի վարորդ, կրկին Գրիգոր անունով տղայի հետ, և ինքը հիշյալ խնդրանքով դիմել է նրան: Որոշակի ժամանակ հետո Գրիգոր անունով նշված տղան այցելել է զորամասի տարածք և տեղեկացրել է, որ զրուցել է Գրիգոր Խաչատուրովի հետ և վերջինս տվել է իր համաձայնությունը: Դրանից հետո էլ սկսել է բնակվել և ասնասնապահությամբ զբաղվել հիշյալ տարածքում:

Այն մասին, որ նախկին «Երասխ 1» զորամասի հողատարածքը, գնել է Գրիգորի Խաչատուրովը, տեղեկացել է նախ Տիգրան Դարաբյանից, իսկ այնուհետև այդ մասին անձամբ իրենց առաջին հանդիպման ժամանակ հայտնել է նաև Գրիգորի Խաչատուրովի վարորդը: Զորամասի տարածքում որևէ շինություն չի ապամոնտաժվել, շինարարություն չի իրականացվել:

15. Սույն քրեական վարույթով մեղադրյալ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի թիվ 05/15-Ա հրամանով 2005 թվականի սեպտեմբերի 5-ից մինչև 2010 թվականի սեպտեմբերի 10-ն ընկած ժամանակահատվածում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Վեդի տարածքային ստորաբաժանման ղեկավար-անշարժ գույքի պետական ռեգիստրի պաշտոնը զբաղեցրած Էդիկ Ավետիսի Ավետիսյանի ցուցմունքով այն մասին, որ ՀՀ Արարատի մարզի Արմաշ համայնքի Երևանյան խճուղի 1/4 գ հասցեում գտնվող «Երասխ 2» զորամասի 0,9 հա մակերեսով «հատուկ» նպատակային նշանակության հողամասը և դրա վրա առկա շենք-շինությունները՝ Նորայր Կարապետյանի, իսկ նույն համայնքի Երևանյան խճուղի 24/1 հասցեում գտնվող «Երասխ 1» զորամասի 1,2 հա մակերեսով «հատուկ» նպատակային նշանակության հողամասը և դրա վրա առկա շենք-շինությունները՝ Էդգար Արշակյանի անվամբ որպես սեփականություն գրանցել և նրանց սեփականության իրավունքի վկայական է հատկացրել կոմիտեի նախագահ Մանուկ Վարդանյանի և նրա տեղակալ Աշոտ Մուսայանի հանձնարարությամբ ու պահանջով: Միևնույն ժամանակ, Էդիկ Ավետիսյանը խոստովանել է, որ հիշյալ հողամասերը և դրանց վրա առկա շենք-շինությունները, որպես սեփականություն նշված քաղաքացիների անվամբ գրանցել է ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի 13-րդ կետի և 87-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջների խախտմամբ, քանի որ նշված իրավական նորմերով արգելվում է քաղաքացիներին և իրավաբանական անձանց սեփականության իրավունքով փոխանցել պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հատուկ նշանակության հողերը, կամ այն շենքերն ու շինությունները, որոնք կառուցված են այդ հողամասերում:

16. Սեյրան Օհանյանը հիշյալ հողատարածքներն օտարելու վերաբերյալ հրաժարվել է ցուցմունք տալուց, միևնույն ժամանակ՝ օգտվելով իր իրավունքից, վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով իր նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու վերաբերյալ որևէ դիրքորոշում հայտնելուց:

Հիմք ընդունելով ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն ՀՀ ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Սեյրան Մուշեղի Օհանյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու վերաբերյալ:

Աննա Կարենի Վարդապետյան